ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/14

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ագարակ» ԲԲԸ-ի 27.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/14 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ագարակ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ագարակ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.06.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Ագարակ» ԲԲԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2017թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ «Ագարակ» ԲԲԸ-ի փաստաթղթերը կցված չեն «armeps.am» էլեկտրոնային համակարգին:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջը:

Ընկերությունը ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է նաև, որ Ընկերության կողմից «armeps.am» էլեկտրոնային համակարգում ֆայլերը կցելիս համակարգի կողմից հուշումներ չի կատարվել կատարվող գործընթացի սխալների վերաբերյալ: Ավելին, համակարգը ցույց է տվել, որ հայտը հաջորդաբար պահպանվել, վավերացվել և փաթեթավորվել է, իսկ հայտի բեռնումից հետո համակարգը ցույց է տվել հայտի համապատասխանություն բոլոր ցուցանիշների գծով, որից հետո էլեկտրոնային հասցեին ավտոմատ ծանուցվել է հայտի բեռնման մասին:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին մասով՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին արգելել կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.06.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 27.06.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. **<u>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 29.06.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար հայտարարված «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով ժամը 09:30-ին: Բացվել են բոլոր մասնակիցների հայտերը: «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը նույնպես բացվել է, սակայն «armeps.am» համակարգը ցույց չի տվել Ընկերության կողմից կցված փաստաթղթերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, մերժելով Ընկերության հայտը, ղեկավարվել է ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով,

համաձայն որի հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.06.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 29.06.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. <u>ԳԲԽ-ԱՄ-2017/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. << Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «Ագարակ» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը*** կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի փաստաթղթերը կցված չեն «armeps.am» էլեկտրոնային համակարգին:

4. «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված բողոքի ընթացքը լուծելու համար՝ Խորհուրդը 29.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1161532-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրելով հայտնել, թե արդյոք «Ագարակ» ԲԲԸ-ի փաստաթղթերը պատշաճ կերպով կցված եղել են «armeps» էլեկտրոնային համակարգին, թե՝ ոչ:

5. Խորհրդի 29.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1161532-17 գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ նշված խնդրի լուծման համար դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն, ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից կցված հայտերի փաթեթից (.zip-) պարզ երևում է տարօրինակ փոքր չափը - 6.1կԲ, այն դեպքում, երբ սովորաբար այն լինում է շատ ավելի մեծ՝ մի քանի ՄԲ (նույնիսկ մի քանի տասնյակ կամ հարյուր ՄԲ): Ապափաթեթավորելուց հետո որևէ կցված փաստաթուղթ չի հայտնաբերվել: Հաշվի առնելով, որ հայտը ստեղծվել, փաթեթավորվել և բեռնվել է համակարգ Ընկերության կողմից իր իսկ համակարգչով և գտնվում է վերոնշյալ վիճակում, ուստի փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Ագարակ» ԲԲԸ-ի 27.06.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 29.06.2017թ. գրությունը՝ կից փաստաթղթերով և ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2017թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ***ՀՀ կառավարության 06 ապրիլի 2017 թվականի 386-Ն թիվ որոշման 4-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:***

Ընթացակարգի հրավերի 8.9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը*** կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «armeps.am» էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել «Ագարակ» ԲԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի փաստաթղթերը կցված չեն «armeps.am» էլեկտրոնային համակարգին:

«Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված բողոքի ընթացքը լուծելու համար՝ Խորհուրդը 29.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1161532-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրելով հայտնել, թե արդյոք «Ագարակ» ԲԲԸ-ի

փաստաթղթերը պատշաճ կերպով կցված եղել են «armeps» էլեկտրոնային համակարգին, թե՝ ոչ:

Խորհրդի 29.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1161532-17 գրությանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2017թ. գրությամբ հայտնել է, որ նշված խնդրի լուծման համար դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը: Կազմակերպությունն, ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ «ՀՀ-ԱՄ-ՇԻՆ-ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից կցված հայտերի փաթեթից (.zip-) պարզ երևում է տարօրինակ փոքր չափը - 6.1կԲ, այն դեպքում, երբ սովորաբար այն լինում է շատ ավելի մեծ՝ մի քանի ՄԲ (նույնիսկ մի քանի տասնյակ կամ հարյուր ՄԲ): ***Ապափաթեթավորելուց հետո որևէ կցված փաստաթուղթ չի հայտնաբերվել: Հաշվի առնելով, որ հայտը ստեղծվել, փաթեթավորվել և բեռնվել է համակարգ Ընկերության կողմից իր իսկ համակարգչով և գտնվում է վերոնշյալ վիճակում, ուստի փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել:***

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հայտերի բացման նիստում մերժելով Ընկերության հայտը՝ քանի որ վերջինիս կողմից փաստաթղթերը պատշաճ կերպով կցված չեն եղել «armeps.am» էլեկտրոնային համակարգին, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ագարակ» ԲԲԸ-ի կողմից 27.06.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ